

ժամուամ, — չոր և անձրեային, անձրեայինը շարունակում Եռնիսամ-
սից մինչև Նոյեմբեր, անձրեային եղանակում օդի բարեխառնությունը
սովորաբար բարձր է լինում և իջնում է մի քանի աստիճան ցած, արևա-
դարձի ձմեռը սկսելուն պես սովորաբար Դեկտեմբեր և Եռնվար ա-
միսներում, Վան այնպիսի արևադարձային երկիրներ, որոնք զտանու-
նով տեղական պայմանների ազդեցութեան տակ, ունենում են երկու անձ-
րեային տարւայ եղանակ:

Դ Ե Ժ. Է Բ Ե Ժ.

ՊԱՏՏՈՒՆԿԵԱԼ

ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԸՌԹԻԻ.

Ահա բաւական ժամանակ է, որ մեր լրագրութիւնը զբաղուած
է մի ծանր բայց ոչ ժամանակակից խնդրով: Մեր լրագրները
զբաղուած են Հայերի եւ ու ծագեալ Հայերի բանակաւիւններով:
Այդ բանակաւիւր գնալով սաստկացաւ եւ գուցէ երկար կշա-
րունակուի: Ես այդ բանակաւիւր, նայելով իւր պատճառին, ծա-
նըր Համարեցի. վասն զի դժուար է խնդիրը երկուստեք պարզ
եւ անկողմնապահ ոգւով հետազօտել. եւ իւրաքանչիւր մի
բառ, որ անզգուշաբար դուրս է թողնվում, կարող է մոլորե-
ցնել ընթերցող Հասարակութեանը, որ միջոց կամ համութիւն
չ'ունենալով բանի էութեանը հասու լինել, ամեն մի գրուածք
հալած իւրի տեղ է ընդունում կամ մի կողմ շարտում հակա-
կրութիւն ունենալով գէտ ի գրողը, Ես ժամանակակից խնդիր
չեմ համարում յիշեալ բանակաւիւր, վասն զի այնպիսի մի ժա-
մանակ, երբ սովն ու թանկութիւնը մի կողմից, ազքատութիւ-
նըն ու թշուառութիւնը միւս կողմից անտանելի դրութեան են
հասցրել մեր ժողովրդին, պէտք է սէր ու կարեկցական միու-
թիւն քարոզել ազգի զանազան մասերի մէջ՝ օգնելու միմեանց.
եւ ոչ թէ, անտեղի բանակաւիւններով նորոգել հին ցաւերն եւ
նոր ի նորոյ ատելութիւն սերմանել ազգի պառակտուած մասե-
րի մէջ կրօնական խնդիրներ յուզելով, եւ այս կամ այն հա-
տուածի սրտին դիպչելով յախուռն դատողութեամբ: Բայց ո-
րովհետեւ խնդիրը արդէն բաւական ժամանակ է որ յուզուած
է, եւ իւրաքանչիւրը իւր կամքին կամ կրքին համեմատ ձգձը-
գեց, ներելի լինի մի քանի խօսք եւս իմ կողմից ասել իբրեւ մի
անհատ:

«Մշակի» լրագիրը իւր հրատարակութեան օրից մի նպատակ էրնարել, այնէ՝ ճանաչել եւ ընդունել կրօնը իբրեւ մի զգացմունք, եւ այդ զգացմունքը արտայայտել ով ինչպէս կամենումէ։ Այս սկզբունքը նա համարումէ խղճի ազատութիւն, եւ քարոզումէ։ Նա կրօնը եւ ազգութիւնը ջոկ ջոկ բաներ համարելով, յորդորումէ ազգի զանազան մասունքներին միանալ մի հայ անուան տակ։ Նա Եւրոպական ազգերի արդի դրութիւնը իբրեւ օրինակ մէջ բերելով՝ յորդորումէ հետեւել նոյն օրինակին։ Այս Մշակի ընդհանուր ուղղութիւնն է։ Եթէ Հայերը այն հանգամանքի մէջ չը լինէին, որի մէջ գտնվում են այժմ, «Մշակի» յորդորը համակրելի կարող էր լինել։ Բայց եթէ «Մշակը» լաւ ճանաչէր հայերին, եւ ուսումնասիրէր Հայոց անցեալ եւ ժամանակակից պատմութիւնը, նա ինքն կը համոզուէր իւր կարծիքի տարապայման լինելուն։

Մինչդեռ Մշակը կրօնական ազատութիւն էր քարոզում, նորա հայ — աւետարանական, հայ կաթողիկ, Ամիրխանեան եւ այլն թղթակիցները բանակուիւր սկսեցին բոլորովին այլ ուղղութեամբ։ Նոյն ինքն պ. Ռաֆֆի իւր «Խենդեր» վերնագրով վիպասանութեան վերջաբանի մէջ, երազական յոյսերով բոլորովին այլ նպատակ եւ այլ կրօնական պաշտաման ապագայ ցանկացաւ տեսնել Հայաստանում երկու հարիւր տարուց յետոյ։ Որովհետեւ այլադաւան հայերը Ռուսահայքում սեպհական լրագիր կամ օրգան չ'ունէին իւրեանց կարծիքը արտայայտելու, «Մշակը» յանձն առաւ այդ պաշտօնը եւ նոցա բերան դարձաւ իսկ «Մեղուն» ընդհակառակն։ Թողնելով երկու կողմի թղթակիցների դատմունքը, որոնք է որ կրքի ծնունդ են եւ է որ անձնական շահերից յառաջացած սոփեստութիւն, խօսեմ՝ այն՝ ինչ որ պատմութիւնը եւ գէպքերը ցոյց են տալիս այդ բանակուիւնների էական պատրուակի, այնէ կրօնական ազատութեան հետեւանքի մասին։

Կրօնն է մի զգացմունք, որ բովանդակումէ իւր մէջը անսահման հաւատ դէպի պաշտելի էակը. եւ բարոյական վարդապետութիւն, որ կապումէ մի ներքին համոզման եւ եղբայրական սիրոյ մէջ բոլոր կրօնակից անդամներին, թէեւ զանազան ազգութեան պատկանէին նոքա։ Այն տեղերը ուր կրօնը ունի իւր ազդեցութիւնը, այս հանգամանքը միշտ նկատելի է. եւ այնպիսի մի ճշմարտութեամբ իրողութիւն է, որի մասին չէ կարելի տա-

րով, որոնք այժմ են տալիս դարերով այլազգի մահամետական-ների իշխանութեան տակ ստրկական հպատակութիւնից թու-յադած մեր սրտերին: Թէ այդ պաշտօնը կառարելու աւելի յարմար տեղը եկեղեցին է, ես չեմ որոշում, այլ թողումեմ իւրաքանչիւր մարդու խղճմանը:

Այսքան կասեմ, որ բողոքականութիւնը չընդունելով տօնակատարութեան սովորութիւնը՝ անտես է առնում ազգային տօներն էլ տօնել. եւ որովհետեւ այդ ազանգը բուն ազգային չէ, բարոյականութեան հետ առեւտրութիւն է ներշնչում իւր հետեւողների մէջ՝ գէպի այն բոլոր եկեղեցիքը, որոնք իւրեանցից անջատուած են, նոցա զանազան ծէսերը պախարակելով: Հռովմէական եւ Յունագաւան Հայոց եկեղեցիներն էլ յարմարովելով իւրեանց կրօնակից այլազգիների եկեղեցիներին՝ ազգային զգացմունք չեն կարող ներշնչել. մնումէ հապաստանեայց եկեղեցին: Եթէ նորանով էլ չը միանանք, շատ խախտւած հիմք կունենանք մեր գոյութեան համար: Հայերիս սեպհական կրօնը եթէ չըլինէր, քաղաքական անկումից յետոյ, շատ վաղուց կը կորցնէինք մեր գոյութիւնը իբրեւ Հայ, Ինչպէս Նրեւանի նահանգում Պարսիկ եւ Տաճիկ մահամետականները կորցրել են իւրեանց ազգութիւնը եւ մի խօսքով մահամետական են կոչուում «ի-ննի» եւ շի՛ հերձուածներով, առանց իմանալու թէ ով որ ազգութեանն է պատկանում: Իսկ եթէ այդ նահանգում քրիստոնեայ տէրութիւն չ'իշխէր, բոլորը կը պատկանէին այն մահամետական ազգին, որ կ'իշխէր:

Երբոր քաղաքական անկումից յետոյ Հայերը գաղթեցին զանազան երկիրներ, նոքա՝ որոնք փոխեցին իւրեանց կրօնը, ներքին համոզմամբ անջատուելով ազգից, կորցրին ազգութիւնն էլ. ձուլեցին այն տէրութեան ժողովրդի հետ, որի կրօնը ընդունեցին. այսպէս, Պարսկաստանում մահամետականութիւն ընդունող Հայերը, Պարսիկ դարձան. եւ այժմ չի կարելի մի հայ մահամետական գտնել այնտեղ. Տաճկաստանումը, Տաճիկ. եւլն. իսկ Ահհաստանի Հայերը՝ հռովմէականութիւն ընդունելով՝ կորան անհետ, որոնց պապերի գերեզմաններն ու եկեղեցիների հայկական արձանագրութիւնները այժմ հազիւ են յիշել տալիս թէ, այնտեղ սորանից երկու դար յառաջ հայեր են գտնուել: Նոյն դժբաղդ գէպըն կը պատահէին եւ այն հայերը, որոնք

րակուսել: Օրինակ՝ մահմետական քիւրդը ներքին համադմամբ կապուած լինելով մահմետական տաճիկ ամբօխի հետ՝ առում եւ հալածումէ իւր ցեղակից եզիդի քիւրդին եւ փոխադարձաբար առնում: Մահմետական Պարսիկը մի այլ մահմետական ազգութեան հետ հաւասարապէս առում եւ անպատիւում է Բէաթի կոչուող դեռ կրակապաշտ մնացած Պարսիկին: Աւրեմն որչափ կրօնի զգացմունքը բաժանւումէ զանազան մասերի, այնքան առեւտրութիւնը աւելանումէ իւրաքանչիւր մասի մէջ: Եւ որչափ հերձուածներ լինեն մի ազգի մէջ, այնքան կը շատանայ զգացմունքի տարբերութիւնը եւ սառնութիւնը դէպի մէն մի հերձուած: Այն այս կարելի է նկատել եւ մեր ազգի մէջ: Հայ — բողոքականները մի առանձին խումբ կազմելով իւրեանց կրօնի որոշ զգացմունքովը, անտարբեր են դէպի հայ — կաթոլիկներն ու հայերը եւ համարեա՞ թէ՛ առումն իւրեանց շրջանից գուրս գանւողներին: Նախանձումն նոյա յառաջադիմութեան ու յաջողութեան վերայ եւ փոխադարձաբար առնումն ու նախանձելի մնում՝ միւսներէց՝ եւ ընդ հակառակն՝ հակուած են դէպի մի բոլորովին այլ ազգութիւն ի շնորհս կրօնական միութեան: Նոյնպէս են եւ Հռովմէական ու Յունադաւան հայերը:

Մարդկութիւնը ազգ կազմելու համար երեք գլխաւոր պայման ունի. կրօն, որ նորան միացնի մի համադմունքի զգացմունքի եւ ազգային սովորութեան մէջ, երկիր, որ նորա գոյութիւնն ու սահմանը յատկացնի մի որոշ տեղի մէջ եւ կապի իւր հետ զանազան նուիրական եւ աւանդական յիշատակներով: Այդ յիշատակներն են նախնեաց գերեզմանները, հին հին քաղաքները, պատմական անցքերի հետ կապ ունեցող լեռները, գետերը, վանքերը, եկեղեցիները եւ այլն եւ այլն. եւ քաղաքական իշխանութիւն, որ նորա կրօնն ու երկիրը պաշտպանի, ու սեպ հական օրէնքներով կառավարի: Ազգութեան այդ երեք հիմունքներէց, մէկից (քաղաքական իշխանութիւնից) զրկուած ենք բոլորովին, մէկից (հայրենի երկրից) կիսով չափ զրկուած ենք. մնումէ կրօնը, որի շնորհով ունինք առանձին ազգային եկեղեցի, ուր միանում ենք հոգւով սրտով եւ զգացմունքով: Ազգային տօներ կատարելով վառում ենք մեր մէջ հին յիշատակները, եւ քրիստոնէական բարոյական սկզբունքի հետ ներշնչում ենք ազգային միութեան գաղափարը. ոգեւորւում ենք մեր նախնեաց գործե-

հայրենիքից դուրս չըգնալով՝ ընդունեցին այլ դաւանութիւններ՝ եթէ իւրեանց շրջապատողները լինէին դաւանակից այլազգիներ։ Բայց բարերազգարար իւրեանց շուրջը մահմետականներ ունենալով, թէպէտ հայութիւնը ի սրաւ ատօղ եւ արհամարհող, սակայն հասան մեր դարին։ Դոքա թէեւ այժմ եւս ցանկանում են այլ ազգութեան անունով կոչուել, օրինակ հռովմէականը ֆռանգի, իսկ բողոքականը ինգլիզի կամ լամսի, բայց նախ՝ որ ոչ ֆռանգի երես են տեսել եւ ոչ ինգլիզի, եւ միւս եւս, իւրեանց կրօնական պաշտամունքը եւ կարգացմունքը հայերէն լինելով, բոլորովին իւրեանց ազգային յատկութիւնը չեն կորցրել։ այժմ մի քանի ազատամիտներ վստահանում են կրօնի անուանը կցել հայ բառը, օրինակ. հայ—կաթոլիկ, հայ—աւետարանական կամ բողոքական։ Մահմետականացած Հայեր շատ կան, բայց նոքա դուրս գալով ազգային եկեղեցուց եւ իսկոյն մտնելով մահմետական մօտիկ մզկիթը, լուծուելով իւրեանց շրջապատող մահմետականների մէջ՝ կորցրին հայութիւնը. այժմ շատ տարակուսելի է նոցա գիւտը, ինչպէս տարակուսելի է մահմետական մաւրիտանացիների եւ քրիստոնեայ հրէաների գիւտը Սպանիայում։ Միթէ քրիստոնեայ հրէաներ չըլին. բայց այժմ չեն երեւում. որովհետեւ իւրեանց սինագոգիայից դուրս գալով եւ մտնելով մօտիկ գանլոզ եկեղեցին, կորցրին ազգութիւնն էլ. որովհետեւ սինագոգայից դուրս գալով՝ թողին իւրեանց առանձնայատկութիւններն ու ազգային սովորութիւնները եւ միացան քրիստոնեաների հետ ազգով ու կրօնով։ Ինչպէս ասացի, այլադաւան հայերը ազգային շահերի համար հաւասար քանքով չեն աշխատում որ ապացուցուեց նոյն ինքն այս Ռուս — Տաճկական պատերազմի ժամանակ պատահած դէպքում։ Դորա պատճառն է ներքին կրօնական համոզմամբ անջատուած լինելը. որով իւրաքանչիւր մասը ազգի ամբողջութիւնից առանձին ջոկ ջոկ ընկերութիւններ կազմելով՝ սեպհական ուղղութեամբ եւ նպատակով, վնասում են եւ վնասեցին ազգի շահերին։ Պէտք է խոստովանել որ, այդ մասունքը ռանակոխ անելով ազգային շահերը, դառնում են գործիք այն ազգի քաղաքականութեան, որի հետ կապուած են կրօնով։ Այսպէս Հայ—հռովմէականները իւրեանց համբաւաւոր Հասունի հետ, գործիք են Հռովմայ շահերին եւ շողոքորթում են այն տէրութեան՝

որ կարող է կամ համաձայնումէ Հռովմայ շահերը պաշտպանել: Յայտնի է որ, Հասուն Հռովմի ազդեցութիւնը Տաճկաստանումը աւելացնելու համար, ոչ թէ միայն կաշխատի որ հայ—հռովմէականները չէզոք մնան ազգային շահերին, այլ կուզի որ բոլորովին անջատուած լինին հայերից եւ ոչ մի գործում մասնակից չլինին, որ օգուտ կարող է բերել ազգի ընդհանրութեանը: որովհետեւ նա Հռովմի արբանեակ է, նորան կաթոլիկ ժողովուրդ պէտք է եւ ոչ հայ: Հայը իւր ազգութիւնը ճանաչելուց յետոյ երբէք խունկ ծխելու չէ Հռովմայ գահին: Բայց այսօրուան օրս հայ հռովմէականների պատրիարք Հասուն ամեն ջանք գործ է դնում լատինացնել ազգին, եկեղեցում ժամերգութիւնը որ մինչեւ այսօր հայերէն էր կատարւում՝ լատիներէն եւ լատին արարողութեամբ կատարել տալ աշխատելով:

Եւրոպան, քաղաքակրթութեան որրանը՝ իւր լուսաւորութեամբ եւ ազատամտութեամբ հանդերձ դեռ ուղղակի մարդասիրական նպատակով գործ չէ կատարում, այլ կրօնական ազդեցութեան տակ: Ֆրանսիական կառավարութիւնը մինչեւ օրերս պաշտպան էր հռովմէական ազգաբնակիւթեան, որի ավացուցութեան համար բաւական է յիշել Պաղեստինի ֆրանսիական հիւպատոսի վարմունքը Նրուսաղէմի Հայոց պատրիարքարանի հետ մի հռովմէականութիւն ընդունող հայ վարդապետի պաշտպանութեան համար, որով նա կամենում էր իւր տէրութեան ազդեցութիւնը ցոյց տալ արեւելքում: Իւր ազգային եկեղեցուց անբարոյականութեան պատճառով պատժուած մի չեպիսկոպոս բողոքականութիւն ընդունելով, եւ խոստանալով բողոքականութիւնը տարածել ազգի մէջ՝ մեծ համակրութիւն է գտել եւ գտնում անգլիայի մեծամեծների մօտ, եւ անգլիական կառավարութեան պաշտօնեաները իւրեանց խնամքը աւելի իւրեանց դաւանակիցների վերայ էին տարածում՝ փոքր Ասիայում քան թէ այլադաւան միւս ազգաբնակիւթիւնների վերայ: այս իսկ պատճառով նոքա որոնք պէտք ունէին պաշտպանութեան՝ ընդունում էին բողոքականութիւն կամ անգլիական եկեղեցին:

Եթէ կրօնը ազատամիտ եւ լուսաւորեալ եւրոպացիների մէջ իւր ազդեցութիւնն ունի, ունենալու է անշուշտ եւ մեր հայե-

րիս մէջ, որ ոչ այնքան ազատամիտ ենք եւ ոչ լուսաւորեալ, Այն ազգերը, որոնք ունին քաղաքական առանձնութիւն, կամ միացած են աշխարհական կառավարութեան հոլանդի տակ, գուցէ առանց ազգի միութեանը զգալի վնաս տալու, հասարակութեան իւրաքանչիւր անձը իւր համակրած կրօնին հետեւի. բայց այնպիսի ազատամտութեամբ, որ ատելութիւն չընտելանէր գէպի իւր այլադաւան ազգակիցը. հակառակ գէպքում վտանգն ակներեւ է. օրինակ, յայտնի է որ Ալբանիացիք կամ Առնաւուռները մահմետական դարձած յոյներ են, բայց իւրեանց կրօնական համոզման աւելի հետեւելով քան ազգակցական կապերին, աւելի մահմետական թիւրքիայի իշխանութեան տակ մնալ են ցանկանում, քան միանալ մի որ եւ է իւրեանց ցեղակից քրիստոնեայ իշխանութեան հետ. Ելզասի եւ Լորենի բնակիչները չընայելով որ գերմանացի են ազգով, ինչպէս ինքն «Մըշուկի» խմբագիրն էլ խոստովանումէ, իրրեւ ֆրանսիացի մեռնել աւելի են ցանկանում, քան թէ իրրեւ գերմանացի ապրել: Թողնելով օտարները դառնամ գէպի մեր ազգը: Տաճկահայքի Բռնաշէն գաւառում Մշու նահանգում ազգով հայ, կրօնքով մահմետական քրդախօս մի քանի ցեղեր, չնայելով որ հայոց հին նախարարների ծագումն ունին, եւ իւրեանք խոստովանում են այդ, բայց կրօնով բաժանուած լինելով հայերից, այժմ հայերի արեւարբու թշնամիներն են: Այդ ցեղերը իւրեանց նախական անունները շատ քիչ աղաւաղութեամբ դեռ պահել են, օրինակ Մըմըքանցիք (Մամիկոնեանք), Բըզըրանցիք (Բագրատունիք), Ըռըշգօթանցիք (Ռշտունիք) եւլն: Վերջապէս արեւելքում դեռ ազգութեան գլխաւոր յատկանիշը կրօնն է: Այնպէս որ, եթէ հանդիպում ես մի մարդու եւ կամենում ես նորա ինչ ազգից լինելն իմանալ, նա քեզ ասումէ իւր կրօնի անունը, եւ դու պարտաւորուած պէտքէ լինիս իմանալ թէ նա որ ազգութեան է պատկանում շատ երկար եւ մանրակրկիտ քննութեամբ, որին դժբախտաբար շատ անգամ գոհացուցիչ պատասխան չես ստանում: Պատահում ես քրդի տարազով մի մարդու, հարցնում ես նորա՝ ազգը, նա քեզ «մուսուլման եմ» կամ «եզդի եմ» է պատասխանում: մահմետականը «շիա» կամ «սիւնի եմ» է պատասխանում: «ֆռանգ» (հայ հռովմէական) կամ «փրօգ» (քողոքական) եմ, է պատասխանում, եւ կարծես

Թէ այդպիսի ազգութիւններ կան աշխարհիս վերայ, բայց որովհետեւ ժողովուրդը իւր ազգութիւնը կրօնովն է որոշում, ուրեմն նա կրօնի ազատութեան գաղափարը չի կարող հասկանալ, եւ կրօնական ազատութիւն քարոզելը մի քաղաքական իշխանութիւնը կորցրած ազգի մէջ, նշանակել է, մահացու կամ շատ խոր վէրք հասցնել նորա ազգային շահերին: Որովհետեւ հայերը որ իւրեանց քաղաքական իշխանութեան անկումից յետոյ գոյութիւն ունին հայ անունով, ի շնորհս կրօնական ինքնուրոյնութեան է, որ որչափ հերձուածներէ բաժանուի՝ կթուլացնի ազգի ուժը, եւ այդ ապացուցուած է դարաւոր ժամանակների հաղարաւոր փորձերով:

Ազգի շահերին դաւաճանել են եւ դաւաճանում են մահաւանդ այն մարդիքը, որոնք կրօնով հեռացած են ազգի ամբողջութիւնից: Այդպիսիքը իւրեանց անձնական պատուի եւ փառքի համար զոհել են ազգութիւնը. նշանակութիւն չտալով ազգային եկեղեցուն, հաւատուրաց եւ ազգութեան միանգամայն են գտնուել: Օրինակ՝ Մեհրութան, նախ ուրացաւ իւր ազգային կրօնը, ուրացաւ իւր ազգը եւ ընդունելով զրադեշտական կրօնն ու պարսից ազգութիւնը, նոցա քաղաքական շահերը յառաջ տանելու համար իւր հայրենիքը—Հայաստանը քանդելու գործիք դարձաւ, Վասակ, նախ անտարբեր գտնուեց դէպի ազգային եկեղեցին, դրժեց եկեղեցուն եւ ազգին հաւատարիմ մնալու ուխտը, բաժանուեց ուխտապահ նախարարներից ու եկեղեցու միաբան ուխտից, եւ պարսից կրօնն ընդունելով՝ վրդուկ Միհրներսէհի—պարսից հաղարապետի նպատակներին գործիք դառաւ եւ աւերեց իւր հայրենիքը—Հայաստանը:

Կիլիկիայի Նուսինեան թագաւորները անտարբեր գտնուելով դէպի ազգային եկեղեցին, իւրեանց պալատի դռները բաց թողին հռովմէական կղերի առաջ. նախ նոցա գործիք դարձան եւ հռովմէական եւրոպայի (Հռովմայ) քաղաքականութիւնը պաշտպանելու համար, իւրեանց շուրջը գտնվող մահմետականների դէմ սկսան պատերազմներ մղել. պատերազմի ժամանակ յոյսները փոխանակ իւրեանց հպատակ ժողովրդի վերայ դնելու՝ փոխանակ հայ իշխանների աջակցութեան գիմելու՝ աչքները տնկեցին Հռովմայ գահակալի ողորմութեանը եւ եւրոպայի հռովմէական իշխանների մարդասիրութեանը, որի հետեւանքը

այն եղաւ՝ որ Եգիպտոսի սուլթանները՝ մի կողմից, փոքր Ասիայի եւ Արարիայի մահմետական իշխանութիւնները՝ միւս կողմից՝ յախուռն յարձակմամբ վերջ տուին Կիլիկիայի լուսինեան թագաւորութեան, որի վերջին թագաւորը երկար ժամանակեայ քանդարկութիւնից յետոյ, դարձեալ յոյսը չկտրեց եւրոպայի հռովմէական իշխանների աջակցութիւնից եւ Հռովմայ պապի ոգորմութիւնից. գիմեց Հռովմ, յետոյ սպանիացի Կաստիլիայի թագաւորին, եւ վերջապէս Փարիզում վախճանեց (ինչպէս օտարազգի պաամիւնները գրում են) իբրեւ բարի կաթոլիկ (°) եւ ոգորմած իշխան։ Ամեն ոք կվկայէ թէ, եթէ Լուսինեան իշխանները հակամիտութիւն չունենային դէպի Հռովմայ գահը, թոյլ չէին տալ Հռովմայ արբանեակներին մուտ գործել արբունի պալատի մէջ։ Եւրոպայի հռովմէական իշխանների գործիք չէին դառնալ, եւ նոցա սիրտը շահելու համար, իւրեանց հայրենիքը վտանկի տակ չէին դնել։

Ես չեմ կամենում ուրացող եւ ազգի շահերին դաւաճանող մարդոց անունները մի առմի շարել. որովհետեւ նոքա, որոնք պատմութիւն կարգացել են, շատ լաւ գիտեն. իսկ որոնք չեն կարգացել, նոցա համար աւելորդ է։

Երբ միանգամ Կիլիկիայի Լուսինեան թագաւորների թոյլաւորութեամբ հռովմէական կղերը ծանօթացաւ հայ ժողովրդի հետ, էլ ձեռք վեր չառաւ նորանից, սկսաւ առեւտրութեան որոմն ցանել ազգի մէջ, սկսաւ եղբայրը եղբօրն ատել, հայը հայի միս ծամել. ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետեւ հռովմէական կղերը, որին ազգութիւն պէտք չէր, իւր հետեւորդների մէջ այնպիսի գաղափար էր ներշնչում դէպի հայերը, որ անհնար էր խաղաղութիւն եւ եղբայրական սէր շարունակել։ Հռովմէական կղերը քարոզումէր իւր հետեւորդներին թէ՛ արքայի համբաւան էլիզեցոյ՝ զէփելիւն. թէ հայերը (լուսաւորչականները) հերետիկոսներ են, ուստի եւ նզովեալ. եւ ով որ նոցա հետ յարաբերութիւն կունենայ՝ նզովեալ կլինի. եւ ինչ Այս սկզբունքը այնպիսի խոր արմատ ձգեց հռովմէապաշտ հայերի մէջ՝ որ նոքա աւելի դիւրութեամբ մահմետականութիւն ընդունեցին, սպանուեցին, քան թէ իւրեանց մայրենի Եկեղեցուն դարձան։ Առեւտրութիւնը երկու կողմից էլ անընդհատ շարունակվումէր, որ շատ մեծ հարուած հասցրեց ազգի ամբող-

ջութեանը: Բաւական լինի յիշել միայն Ինկուբիւթիւն, որոնց դառն յիշատակը՝ աւեր եւ կործանումն է եղել: Իւնիթօրները, որոնք բուն էին դրել Նախիջեւանի Երնջակ գաւառում՝ միայն անէծքով եւ նզովքով են յիշուում: որովհետեւ ուր նոցա ոտքը դիպել է, կամ՝ բոլորովին ամայի է եւ գերեզմանաքարերն ու եկեղեցիներին մնացորդներն են երեւան հանում՝ նոցա սխրագործութիւնները, եւ կամ՝ մահմետականաբնակ են: Անցեալ տարի ցաւօք սրտի ականատես եղայ այդ իւնիթօրների տմարդի եւ ազգակործան գործունէութեան մնացորդներին:

Պէտք չէ ուրանալ որ, նոցա տմարդի արարմունքը խայտառակելու եւ նոցա իբրեւ ամբարշտութեան եղջիւր յայանելու համար Յովհան Որոտանեցին եւ Գրիգոր Տաթեւացին շատ ջանք գործ դրին իւրեանց հետեւողներով, ինչպէս նա եւ Ղազար Զահեցիի Կաթուղիկոսը իւր Դրախտ Գնչակի (ըստ հռովմէականաց Գրիգորի Կաթուղիկոսը իւր Դրախտ Գնչակի) աստուածաբանական գրուածքով ու Սիմէօն Կաթուղիկոս Երեւանցի իւր Պարսկաշահ անուն աշխատասիրութեամբ եւ կարգաւորուած Տօնացուցի յառաջաբանով՝ աշխատումէին զգուշացնել զՀայոս հռովմէականների որոգայթներից: Հռովմէական քարոզիչների, որոնք ազգի մէջ երկպառակութիւն ձգեցին, եւ կրօնով միացեալ ազգը պառակտելով, մի մասը հանեցին ազգի Հոգեւոր Դիւան իշխանութեան տակից:

Եթէ Հայերը կրօնով բաժանուած չլինէին, նոցա Դիւանը կամ ներկայացուցիչը մի անձն կլինէր, եւ նոքա իւրեանց ազգային եկեղեցու հովանիքի տակ կգործէին յօգուտ ազգի ընդհանրութեան. իսկ այժմ մի քանի հերձուածներ ելնելով եւ մի քանի կուսակցութիւններ եւլն, բաժանուելով, իւրաքանչիւր հերձուածը եւս իւր գլխաւորի տրամադրութեանը խաղալիկ եղած՝ ընդհանրութեան վնասն են նիւթում: եւ անհաշտ աչքով ու թշնամական կրքով են միմեանց մօտիկ տալիս:

Յայտնի է որ իւրաքանչիւր անձի կրօնական պաշտամունք արհամարհելը, նորա զգացմունքին դիպել է. եւ ոչ մի բան մարդու մէջ այնպիսի վրէժխնդրութիւն չի յարուցանում, որպէս զգացմունքի դիպելն. իսկ հայերի ուժացեալ իւրաքանչիւր հերձուած, ամենայն օր միմեանց կրօնական պաշտամունքը արհամարհումեն, ամենայն օր միմեանց զգացմունքի դիպումեն,

սորանով էլ, մրէժխնդրութիւնն ու ատելութիւնը իւրաքանչիւր հերձուածի մէջ միշտ լարուած դրութեան մէջ է մնում: Անհնար է, որ երկու զանազան դաւանութեան պատկանող հայր միասին գտնել, որ նոքա կրօնական վիճաբանութեամբ բռնուած չլինէին եւ միմեանց չըմբռնէին, կրօնական պաշտամունքի մէջ այս ինչ եւ այն ինչ կոտոր պախարակելով: Այսպիսի լարուած դրութեան մէջ են ուժացեալ հայերը դէպի իւրեանց մայր ազգը՝ մեր եկեղեցին եւս. բայց եթէ կրօնի խտիրը չըլինէր, նոքա միմեանց հետ համերաշխ կըլինէին եւ բոլորը մի նպատակի կը ծառայէին:

Այլհրօն հայերը միշտ աշխատել են իւրեանց առանձին հասարակութիւն ճանաչել տալ եւ չընտանուել ազգի ընդհանրութեան հետ: Այդ նպատակին հասնելու համար նոքա ամեն միջոց գործ են դրել, մինչեւ անգամ չեն խղճահարուել ամբողջ ազգը մատնել: Այսպէս, 1827 թուի Ռուս—պարսկական պատերազմից յետոյ, երբ Ս. Էջմիածինը մնաց ռուսների ձեռքը, հայ հռովմէականները, որ կամենում էին անջատուել բոլորովին Կ. պօլսոյ Հայոց պատրիարքի իրաւասութեան տակից՝ որ միանգամայն ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթսեղիկոսի փոխանորդ եւ ներկայացուցիչ էր ի Թուրքիա, ու ազգի ընդհանրութիւնից, եւ ցանկանում էին բոլորովին այլ Ռէլիգիոն (ազգ) կազմել, յատուկ ազգապետով (պատրիարքով), յարմար առիթ գտան եւ յայտնեցին Բ. դրանը, որպէս թէ, հայերը (լուսաւորչականները) որ ռուսների հետ միանալով, պարսիկներին մեծ ջարդ տուին, եւ Ս. Էջմիածինը ազատեցին պարսիկներից, այժմ ռուսաց զօրքերի հետ կամենում են յարձակուել օսմանեան տէրութեան վերայ. այդ դաւադրութեան մասնակից չըհամարուելու համար, ձեւայրին որպէս թէ՛ իրանք նախապէս յայտնում են Բ. դրանը թէ՛ իրանք, որ ոչ հայոց եկեղեցին են գնում, ոչ նոցա հետ հաղորդակցութիւն ունին, խնդրում են որ Բ. դուռը իւրեանց՝ հայերի հետ չըխառնի, եւ բարեհաճի ճանաչել այլ Ռէլիգիոն եւ տայ յատուկ ցեղապետ կամ պատրիարք: Որպէս զի իրանք էլ չարժանան պատժին, որ սահմանուելու է ապստամբ հայերի համար: Այս մոքով մի աղերսագիր էլ տուած են եղել Սուլթանին՝ նորա սիրելի Խոսրով Մէհմէտ փաշայի ձեռքով: Սուլթանը քննութեամբ հասու լինելով աւելի հայոց քան

Հռովմէականների հաւատարմութեանը, արքայի մի հրաման հանեց, որով բաւական գաղափարացի հայ հռովմէական եւ երեւելի ընտանիք արքայութեան Կոստանդնուպօլսից:

Ազգի հռովմէական հերձուածը, որ իրան բոլորովին անջատ մարմին էր համարում. հայութիւնից, հռովմէական կղերի տագրանքին միտ դնելով, չըհրաժարուեց առանձին ցեղապետ ունենալու գաղափարից, եւ նպատակին հասաւ Ֆրանսիական եւ Աւստրիական դեսպանների միջամտութեան ջնորհիւ: Այդ դեսպանների միջնորդութեամբ Սուլթանը բարեհաճեց արքայութեանը յետ դարձնել, եւ հռովմէականներին առանձին պատրիարք ունենալու արտօնութիւն տալ: 1830 թ. սեպտեմբերի 30-ին Հռովմից հոգեւոր գլուխ նշանակուեց Աւստրիացոց հպատակ Նուրիճան Հ. Անտօն, որ օտարահպատակ լինելով՝ միայն կրօնական պատրիարք ճանաչուեց, իսկ արքունի հրամանով քաղաքական պատրիարք նշանակուեց Մանուէլեան Հայր Յակովբ:

Ազգի ամբողջութեան համար այս պառակտումը բաւական հարուած կարող է համարուել: Արովհետեւ այսօր Թուրքիայում Կ. Պօլսոյ Հայոց Արքեպիսկոպոս — պատրիարքը, որ ճերկայացուցիչ է դրան առաջ նաեւ զպոլիների ու ասորիների համար, չի կարող ներկայացուցիչ համարուել մի խումբ հայերի, որ կրօնով բաժանուած են ազգի ամբողջութիւնից:

Մեր ազգի ներկայացուցիչները հոգեւորականներն են, մեր գործերը ղեկավարւում են ազգի ընդհանրութիւնից ընտրուած հոգեւոր անձանց ձեռքով. արդեօք հայ բողոքականներն ու հայ հռովմէականները հաղորդակցում են եւ կը կառնեն հաղորդակցել այդ հոգեւոր անձանց ընտրութեան. իբրեւ մի ազգ, իւրեանց գործերը կյանքն են այդ ընտրուածի տնօրէնութեանը: Դիցուք այժմ Պատրիարքը հոգեւորական լինելով, այլադաւան հայերը հեռանում են նորանից. եթէ աշխարհական լինէր պատրիարքի պաշտօն կառարողը, նոքա նորան իւրեանց ներկայացուցիչ կհամարէին: Կցանկանային որ իւրեանց գաղափարները՝ եկեղեցիների եւլն. գործերը ազգից ընտրուած ներկայացուցչի տնօրէնութեամբ հոգացուէին:

Ազգը մի կենդրոն ունենալու է անշուշտ, եւ որովհետեւ մեծամասնութիւն կազմում են հարազատ հայք, ի հարկէ այնտեղերը պիտի համարել կենդրոն, ուր ազգը կկամենայ կամ

կամեցել է եւ է: Արդեօք այլակրօն հայերը յանձն կառնե՞ն դառնալ դէպի այդ կենդրօնը իւրեանց գործերի մասին: Թէ մինը աչքը սիւսի անկէ Հռովմայ ճանապարհին, խոկ միւսը մի այլ տեղ, պատճառելով թէ՛ «կին ածի, ոչ կարեմ», միւսը՝ թէ՛ «յուծս եղանց գնեցի» եւ լին:

Մենք ուրախ ենք, որ հայ հռովմէականներից եւ հայ բողոքականներից կան ազատամիտներ, որոնք կրօնը ներքին համոզում համարելով, ճշմարիտ հայ հոգւով աշխատում են ազգի համար: Ուրախ ենք դարձեալ, որ այժմ հայ բողոքականներից ու հայ հռովմէականներից շատերը Բաղէկ-ճ-Ձ-ն իւրեանց կրօնական անուանը կցել հայ բառը, օրինակ. հայ—կաթոլիկ, հայ աւետարանական եւ լին: Ուրախ ենք, որովհետեւ նորա միջոց չունենալով յարուելու այն ազգի հետ, որի կրօնը ընդունել են, հաշտուեցին հայ բառի հետ. բայց աւելի ուրախ կը լինէինք եթէ դորա պատիւ չէին համարիլ հայ բառին կցել աւետարանական կամ կաթոլիկ անունները: Այդ անունները հայ բառին թունաւորում են, եւ այդ թոյնը թէ ինչ ներգործութիւն ունի, չեմ բացատրում այժմ: Բայց ցաւօք սրտի պէտքէ ասել, թէ դեռ Ֆռանգ եւ Նեմէց կոչվող հայեր կան: Բարեկամներիցս մինը միանգամ պատմեց հետեւեալը. «Գաւառապետի աւագ օգնական մի հայի հետ Ալէքսանդրապոլի գաւառում մտնելով մի հայ հռովմէականի գիւղ, կակնկալէինք որ իբրեւ օտարազգի եւ տէրութեան պաշտօնեաներ լաւ հիւրասիրութեան պիտի հանդիպէինք, բայց իբրեւ հայ՝ արհամարհանքի ենթարկուեցինք Ֆռանգ կոչվող հայերից. նոյն արհամարհանքով վարուեց մեզ հետ գիւղի ծխատէր քահանան էլ: Եւ երբ մենք, առաց բարեկամս, այս դէպքի մասին խօսք բացինք Ալէքսանդր վարդապետի մօտ, նա Պօղոս վարդապետին մեղաւոր հանեց, խոկ Պօղոսը Ալէքսանդրին», Այս, եթէ այլադաւան հայերից հարիւրին տասը իւրեանց հայ լինելը չեն ուրանում, մնացեալ իննսունը բացի հայ անունից ամեն անուն ուրախութեամբ կրել յանձն են առնում:

Վերեւ յիշեցի որ մեր ազգից ուժացեալ իւրաքանչիւր հերձուած արհամարհանօք է նայում միւսի կրօնական պաշտամունքի վերայ: Կրօնական պաշտամունքի մէջ կան արարողութիւններ, որոնք զուտ ազգային են. եւ այս նորանից է, որ ազգերը ինչ կրօն որ ընդունել են, միշտ աշխատել են ազգային

սովորոթիւնները հետը խառնել, իրրեւ արտաքին արարողութիւններ կամ ծէսեր իւրեանց բուռն զգացմանքը արտայայտելու համար: Այս հանգամանքին նոյն ինքն կրօնի վարդապետները ներողամիտ աչքով են մոտիկ տուել: Այսպէս, երբ նոր քրիստոնեայ դարձած հեթանոսների ու հրէաների մէջ լէճ պատահեց թլլատութեան եւ անթլլատութեան համար, առաքեալներն ու երիցունքը երուսաղէմում ժողով կազմեցին, եւ սահմանեցին որ հաւատացեալ հեթանոսները պէտքէ զգուշանան կուռքերի կերակրներից (զոհից), պոռնիկութիւնից մեռելոտիներից եւ արիւնից, եւ ազատ կացուցին նոցա թլլատութիւնից ու հրէից ծիսական օրինակատարութիւնից, (Գործ. առաք. 15 գլ.) Պօղոս առաքեալը որ ժողովին ներկայ էր, ուր սահմանուեց թէ, թլլատութիւնն ու հրէական ծիսական օրէնքները քրիստոնէութեան հետ կապ չունեն, երբ հասաւ Գերբէ եւ Նիւստրա հրէայ հաւատացեալ կնոջ եւ հեթանոս անհաւատ հօր զաւակ Տիմոթէոսին հրէական սովորութեան համեմատ թլլատեց, որ հրէաները աղմուկ չբառնան չգայթակղուեն: (Գործք առաք. 16. գլ.)

Այս անցքից շատ լաւ յայտնի եղաւ որ, առաքեալները միայն քրիստոնէական կրօն, առաքինութիւն ու բարոյականութիւն էին քարոզում ազգերին, առանց ծէսերին ու արարողութիւններին ուշ դարձնելու: Ամեն ոք այնքան ազնուութիւն կունենայ խոստովանելու թէ, ազգային սովորութիւնները հարկաւոր է անկորուստ պահպանել, եւ նոցա նշանախեցն անգամ զանց առնելու չէ, ազգի առանձնայատկութիւնքը ցոյց տալու համար: Ապա թէ ոչ, Քրիստոնէութիւնը ինքն ըստ ինքեան ղուտ բարոյականութիւն քարոզելով եւ մի ազգի ընդ սկիզբն առնելով, պէտքէր որ այժմ բոլոր քրիստոնեաները միեւնոյն ձեւով իւրեանց կրօնական պաշտամունքը կատարէին, բայց ոչ. այդպէս չեղաւ: Թէ եւ բոլոր քրիստոնեաները ազգային եկեղեցին ունին, իւրեանց եկեղեցու յատուկ բարերարներով, բայց բոլորն էլ միապէս քրիստոնեայ են Քրիստոսի անունով մկրտուած եւ մկրտութեամբ Քրիստոսին զգեցած լինելով: Պօղոս առաքեալը Գաղատացւոց գլ. Գ. հմր. 27—28 ասումէ. «Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր, ոչ հրէի, եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ ազատի. ոչ արուի եւ

ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս: Այս գրե-
լով առաքեալը կամենումէր յայտնել հաւատացեալներին թէ, Քր-
իստոսի հաւատացողների մէջ չկայ խտիր լինին նոքա հրէայ, թէ
հեթանոս, ամենքն էլ Քրիստոսի անունով մկրտուած լինելով՝ մի
են, Եղաւ ժամանակ, որ հաւատացեալները նոյն ինքն առաքեալ-
ների օրով սկսան յեծաբանել միմեանց վերայ, այն առաքեալի
անունով, որի քարոզութեամբ ընդունել էին քրիստոնէութիւն.
այդպիսի տարապարհակ կարծիքը անտեղի համարելու համար,
Պօղոս առաքեալը Ա. Կորնթացւոց 1 գլ. 11—15 համարում ա-
սումէ. «Յայսմի եղաւ ինձ որ, մինդ ասումէ թէ, ես Պօղոսեան եմ,
եւ միւսն թէ, ես Ապօղոսեան. մի թէ Պօղոսը ձեզ համար խաչի
վերայ բարձրացաւ, կամ Պօղոսի՞ անունով մկրտուեցիք. սորա-
նով առաքեալը կամենումէր այն ժամանակուայ համար հասկա-
ցնել թէ, թէեւ զանազան անձանց ձեռքով եւ զանազան հանգա-
մանքների մէջ ընդունի ոք քրիստոնէութիւնը, եւ իւր կրօնական
պաշտամունքը զանազան ձեւերով կատարի, բայց մի Քրիստոսի
անունով է: Վերեւ յիշուածներից երեւումէ որ, նոյն ինքն քրիս-
տոնէութեան առաջին դարում հաւատացեալների ընկերու-
թեան մէջ մտել էր խտիրը կրօնական ծիսակատարութեան ու
անուանական յորջորջման նախապատուութեան մէջ: Այս խտի-
րը եւ անուանական յորջորջումը այնքան զգալի չէր մինչեւ
չօրրորդ դարը. որովհետեւ քրիստոնեաները ենթակայ լինելով
հալածանքի, միջոց չունէին ծիսակատարութեան ու նախա-
պատուութեան համար վէճեր յարուցանել: Եւ որովհետեւ քրիս-
տոնէութիւնը քարոզումէ երախտագիտութիւն, մարդկային
բնական օրէնքն էլ նոյնն են տրամադրում. այս խսկպատճառաւ
բոլոր քրիստոնէաները իւրաքանչիւր տարի կրօնի անունով նա-
հատակուած առաջին, երկրորդ եւ երրորդ դարերի մարտիրոս-
ների յիշատակները անխտիր ատնումեն, նոցա սպանման օրը ի պա-
տիւ նոցա երգեր ու աղօթներ կարդալով եւ նոցա կենսագրու-
թիւնը պատմելով. որով աւելի ազդումեն ժողովրդի վերայ, որ
սովոր է յափշտակուել ու ոգեւորուել կրօնի համար նահա-
տակողների սքանչելի պատմութիւնները լսելով: Այդ տեսակ
տօները միշտ ունեցել են իւրեանց վսեմ նշանակութիւնն, երբ
քրիստոնէութիւնը վտանկի մէջ է եղել: Մի մարտիրոսի նահա-
տակութեան պատմութիւնը ոգեւորել է մի ամբողջ ազգու-

թիւն կամ մեռնել քրիստոնեայ անունով, կամ ապրել թոյլ չտալով իսպի թշնամիներին դիպել քրիստոնէական կրօնին:

Երբ որ քրիստոնէութիւնը մուտ գործեց արքունի պալատների մէջ՝ եւ ազգերը խմբովին քրիստոնեայ դարձան՝ կազմեցին ազգային եկեղեցի. ամեն մի եկեղեցի բացի նախնի դարերի մարտիրոսների յիշատակից, սկսեց տօնել նաեւ ազգային եկեղեցու բարերարների յիշատակը՝ յատուկ ծէսերով եւ արարողութեամբ: Եւ վերջ ի վերջոյ բանն այնտեղ հասաւ, որ եկեղեցին սկսաւ երբեմն միւս եկեղեցու բարերար համարուածք փոխանակ տօնելու՝ նշովել. որովհետեւ սկսաւ եկեղեցին իւր ազգային շահերին ծառայել, ի հարկէ իւրաքանչիւր ազգ իւր առանձին շահն ունի հակառակ միւսին: Այսպէս Հայոց ազգը, բացի Ս. Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալներից, հանդիսաւոր կերպով տօնումէ Ս. Գրիգոր լուսաւորչի տօնը. որովհետեւ նորա շնորհիւ բոլորովին ընդունեց քրիստոնէութիւն. եւ ի յիշատակ իւր ապաշխարութեամբ դարձին, հինգ օր ծոմապահութեամբ կամ պահօք է անցկացնում այն օրերը, որ մեր Յօնացուցի մէջ Առաջաւորաց պահօք է կոչւում. որի վերջին օրը Յօնանու մարգարէի եւ Նինուէի ապաշխարութեամբ ապրելու յիշատակն է կատարում: Այդ պահօքը միւս քրիստոնեայ ազգերը ոչ թէ պահումեն, այլ զանազան թիւր մեկնութիւններ տալով՝ անգոսնումեն մեզ: Յոյներն ու հռովմայեցիք Վարդանանց յիշատակը չեն տօնում, որովհետեւ նոցա ազգային եկեղեցու հետ կապ չունի, բայց մենք պէտքէ տօնենք. մեր քրիստոնէական պատմութեան մէջ այնպիսի մի դարագլուխ յիշելու համար, երբ կրօնը պէտքէ գնար, եւ ազգը դրագեշտական կրօնը ընդունելով, պէտքէ խառնուէր Պարսից հետ եւ կորցնէր իւր ազգութիւնը: Այդ տօնը կատարելով, մենք ակամայ ատելութեամբ յիշումենք Յոյներին, որոնց ժամանակակից մեր Վաթուղիկոսը եպիսկոպոսների ու իշխանների հետ դիմեց, որ իբրեւ քրիստոնեայ՝ օգնէին կրօնական պատերազմի ժամանակ. իսկ յոյները, աչք գոցեցին, եւ տեղներից անգամ չջարժեցին՝ եւ ընդհակառակն միացան Պարսից հետ:

Պ. Ամիրխանեանը ջատագով լինելով մինչեւ Ս. Սահակը եւ Ս. Ներսէս Շնորհալին տեւող եկեղեցական ծէսերին, կարծումէ թէ այժմ՝ Հայոց եկեղեցին այլ եկեղեցի է եւ ոչ Լուսաւորչի ու նորա

յաջորդների օրով եղածը: Նա մի քանի կցկտուր փաստերով կարող է գուցե տգէտներին հաւատացնել. բայց հասկացող հասարակութեանը, բնաւ ոչ, Պ. Ամիրխանեանը կարծում է որ Հայոց եկեղեցին շեղուել է իւր նախնական ուղղութիւնից. ընդհակառակն, նախնական ուղղութիւնն է, որ արեւմտեան եկեղեցուն ստիպել է տալիս նայել մեր եկեղեցու վերայ իբրեւ հերետիկոսի: Նախնեաց շաղին հետեւելով Հայերը՝ բացի տիեզերական նախկին երեք ժողովներից չընդունեցին մնացեալները: Այդ իսկ է պատճառը որ յունական եւ հռովմէական եկեղեցիքը Հայերին պատկերամարտ էին համարում եւ ուրիշ բարուրանք բարդում: Թէպէտ մեր եկեղեցական աւանդութեանց նայելով՝ նոյն ինքն Քրիստոսի ժամանակից Հայերը ընդունել են դաստաւակը՝ եւ յարգել, որը վկայում են բոլոր հայ պատմիչները, որոնց կարող է դիմել ամեն ոք ստուգութեան համար: Ինքն Ս. Գրիգոր լուսաւորիչ Ս. Յովհաննէս Մկրտչի եւ Աթանազինէ Եպիսկոպոսի մասունքները Յունաստանից բերելով՝ սորվացրեց նորահաւատ հայերին յարգել եկեղեցու համար նահատակութեան ճշխարհները, իբրեւ նուիրական մնացորդ: Այս էլ ստուգելու համար կասկածողը թող դիմէ հայ պատմիչներին:

Ես չեմ խօսում ամուսնութեան անհրաժեշտութեան մասին, բայց թէ եկեղեցու Հայրապետները նոյն ինքն Ս. Գրիգոր լուսաւորչից սկսած, երբ իւրեանց նուիրել են հոգեւոր կոչման՝ փոխադարձ համաձայնութեամբ՝ անջատուել են իւրեանց ընտանիքից, հետեւելով առաքելոյ այն խօսքին որ ասում է. «Այլ կամիմ՝ զձեզ անհոգս լինել. զի որ անկինն է, հոգայ զՏեառն, թէ ո՞րպէս հաճոյ լինիցի Տեառն, եւ որ կանամբին է, հոգայ զաշխարհիս, թէ որպէս հաճոյ լինիցի կնոջ իւրում» (Ա. Կորնթ. Է. գլ. 32 — 33 հմբ): Ս. Գրիգոր լուսաւորչի կնոջից հրաժարուելով իւր անձը առաքելութեան պաշտօնին դնելը եւ այնպէս Հայոց Հայրապետութիւն անելը վկայում են հայ պատմիչները եւ նոյն ինքն Ուխտանէս, հատուած Ա. գլ. Կ. երես 84. տպուած Ս. Էջմիածնում: Հարկաւոր է կուսակրօնութիւնն թէ ոչ, ես ժամանակ եւ միջոց չունիմ երկար ու բարակ քննել եւ իմ եզրակացութիւնը յայտնել: Միայն կիսնդրեմ ամեն բարեմիտ մարդուց, որ ինքն վկայէ. ամուսնացեալը աւելի սակաւապէտ կլինի թէ չամուսնացեալը: Ո՞րը իւր կոչմանը բոլորովին անձնատուր

կարող է լինել. ամուսնացեալը, որ պարտաւորուած է եւ իւր ընտանիքի մասին մտածել, թէ չամուսնացեալը: Առաքելութեան պաշտօնին ո՞րը աւելի յարմար է. ամուսնացեալը, թէ չամուսնացեալը: Պ. Ամիրսանեանը եթէ ամուսնացեալ լինէր՝ կհամաձայնէ՞ր քարոզչութեան կամ հոգեւոր հովուութեան համար գնալ բարբարոսների աշխարհը, ուր կեանքին ամեն վտանկ սպառնումեն: Յայտնի է որ մեր ազգը աշխարհի ամեն կողմ ցրուած է, նոցա հովուելու համար հարկաւոր է մարդ ունենալ. ազգը կկարողանա՞ր ամուսնացեալ հովիւների բազմագիմի պէտքերը հոգալ: Ազգային հանտատութիւնք, որ այժմ միայն վանքերն են մնացել, միջոց ունի՞ն ամուսնացեալ վանականների պէտքը հոգալ: Ես զեղծումների մասին խօսք չունիմ. բացառութիւն ամեն բանում կարող է գտնուել: Երբ Հայերը քրիստոնէութիւն ընդունեցին, Քահանայապետութիւնը համարեւ ժառանգական դարձաւ Ս. Գրիգորի յաջորդների մէջ: Յայտնի է, որ Ս. Գրիգոր նախարարական սերունդ լինելով, ունէր եւ ստացաւ իւր ժառանգների ապահով ապրելու համար միջոց. բայց երբ որ Հայրապետական գահի վերայ բարձրացան ազգի ընտրութեամբ այնպիսի անձինք, որոնք ոչինչ հարստութիւն չունէին, եկեղեցական հարք նկատելով, որ ընտրուած անձինքը փոխանակ իւրեանց ստանձնած պաշտօնով եկեղեցու օգտին ծառայելու, պէտքէ եկեղեցին իւրեանց օգտին ծառայացնէին, սահմանեցին որ կուսակիցները միայն բարձրանան Եպիսկոպոսական եւ Կաթողիկոսական աթոռների վերայ, որոնք կապուած չլինելով ընտանեկան կեանքի հետ՝ կարող կլինէին եկեղեցու համար մտածել: Սորա համար եթէ միջոց լինի, մի ուրիշ անգամ:

Այժմ դառնամ բուն նպատակիս. իմ կարծիքով կրօնական պառակտումն Ազգի մէջ բաժանումներ է առաջացնում. այդ բաժանումները առաձին առանձին շահ եւ նպատակ ունենալով՝ միմեանց վնասումեն, որով վնասվումէ ազգի ամբողջութիւնը: Կրօնի կամ խղճի ազատութիւն ասելով, հարկաւոր է հասկանալ թէ, պէտք չէ պախարակել եւ արհամարհել այս ինչ կամ այն ինչ ազգի եկեղեցու ծէսերը եւ արարողութիւնները եւ սորանով հակառակութեան որոմն ցանել ազգի կամ ազգաց ամբողջութեան մէջ: Հարկաւոր է յար-

գել իւրաքանչիւր ազգայնութեան զգացմունքով կազմակերպուած եկեղեցիներէ առանձնապատկութիւնքը: Քարոզիչները՝ որ իւրեանց ընկերութիւնից հրահանգ ունին քրիստոնէութիւնը տարածել ոչ քրիստոնեայ ազգերի մէջ, թող իւրեանց պարտքը ճանաչեն. վայրենի Քրդեր եւ ոչ քրիստոնեայ ազգեր շատ կան՝ թող նոցա քարոզեն: Հայոց ազգը քրիստոնեայ լինելով, եւ անգրանիկ եկեղեցին կազմելով, միանգամայն իւր շրջապատող ազգերից աւելի կրթուած է եւ պէտք չունի այլ քարոզիչներէ: Այդ քարոզիչները թող հասկանան որ, մեր եկեղեցին էլ Քրիստոսի անունով մկրտելով իւր մանուկներին եւ Քրիստոսի աւետարանի հոգւովը սնուցանելով իւր զաւակներին, հոգու փրկութեան խորհուրդը կարող է մատակարարել. մեր եկեղեցին ոչինչ պակասութիւն չունենալով հանգերձ՝ հայերիս համար միւս եկեղեցիների վերաբերութեամբ այն առաւելութիւնն ունի որ աղօթքն էկէղեցի է: Յետին դպրից սկսած մինչեւ Կաթողիկոսը, Ազգն է ընտրում: որոնք եթէ ազգային եւ եկեղեցական իրաւանց հակառակ գործեն, կամ առանց ազգի հաճութեան նորամոյժ բաներ թոյլ տան եկեղեցու մէջ՝ կոտորեն կամ յղբրկուին իւրեանց պաշտօնից: Այս այսպէս լինելուց յետոյ, մեր եկեղեցուց դուրս եկողը իւր ազգակցութեան իրաւունքը չէ յարգում եւ կերպով իմն կորցնումէ:

Եւրոպայում բողոքականութիւնը սկսաւ Հռովմայ Պապի դէմ որ աշխատումէր բոլոր ազգութիւնները սպանելով՝ մի հռովմէական ժողովուրդ գոյացնել. Եւրոպան բողոքաւոր էր պապի զեղծումների դէմ: Բողոքաւորութիւնը մեր մէջ ինչից կարողացաւ յառաջանալ կամ պիտի յառաջանայ: Եւրոպան բողոքաւոր է, վասն զի քահանան Հռովմայ շահուն գործիք է, եւ Հռովմ ինքն է նշանակում քահանայ, ի հարկէ Հռովմայ շահերը հակառակ են Գերմանացուց՝ Թրանսիլուցուց եւն. ազգային շահերին: Բայց մեր Հայոց մէջ՝ սկսեալ վերին պաշտօնեայից մինչեւ ստորին սպասաւորը ազգն է ընտրում, եւ իւր եկեղեցին յանձնումէ նոցա կառավարութեանը, որ կառավարեն առանց ազգային ծէսերից՝ արարողութիւնից եւ կանոններից շեղուելու: Նոքա որոնք հեռանում են ազգային եկեղեցուց, իւրեանց իրաւունքից զրկուելով, ո՞ւմ դէմ են բողոքաւոր, ազգի դէմ, թէ հոգեւորականների, որոնք ընտրվում են ազգից:

Բողոքականները իւրեանց աւետարանական են կոչում. որ քրիստոնեայ եկեղեցին է, որ աւետարանական չէ. միթէ Հայերը քրիստոնեայ լինելով աւետարանը չեն ընդունում. քաւ լիցի, Հայերն աւելի կարող են աւետարանական կոչուիլ քան մի որ եւ է ազգ. որովհետեւ ամեն դէպքում աւետարանին են դիմում:

Կրօնի կատարեալ ազատութիւն այն ժամանակ կլինի, երբ ամեն մարդ ինքնաբերաբար, առանց կանխակալ կարծիքների եւ հետեւողութեան, ամենայն ազատամտութեամբ այս կամ այն կրօնը կընդունի. Քանի որ մի ուրիշը պէտքէ կրօնի սկզբունքը ազդի, եւ ամեն ջանք գործ դնի իւրեան հետեւողներ հրապուրելու, կրօնի ազատութիւնը բաւը միայն լոկ գաղափարական մի ոճ կմնայ, մի որոգայթ, որով պիտի ջանան իւրեանց որսը շատացնել նոքա, որոնք կրօնի ազատութեան պատրուակով, ուրիշի կրօնական պաշտամունքը անգոսնումեն եւ ուրիշի համոզումը զանազան աններելի խաբեբայական միջոցներով բռնաբարում:

Այ մի եկեղեցի թող չկարծի թէ փրկութիւնը միայն իւր եկեղեցով է լինելու. ընդհանուր եկեղեցին կազմող առաքելական ամեն եկեղեցի, բաւական է որնա հիմնուած լինի քրիստոնէական սկզբունքով եւ Քրիստոսի անունով, կարող է իւր ժողովրդի հոգեւոր կարիքը հոգալ: Եկեղեցիների առանձնայատկութիւնները կայանումեն Առաքելական յաջորդութեան հետ՝ նաեւ ազգային ծէսերի ու արարողութիւնների մէջ. ազգային այդ յատկութիւնը եկեղեցուց շորթել յանդգնողը ազգային սովորութեանց դաւաճան է. Յանկալի էր որ մեր ազգի պարզամիտ ժողովուրդները ազգային սովորութեանց այդ դաւաճաններին լաւ ճանաչէին՝ եւ ըստ այնմ՝ հետները վարուէին: Մոռացայ յիշել. ի պատասխանի Պ. Ամիրխանեանի այն կարծիքին, որովնա ջատագով է հանդիսանում մինչեւ Ս. Ներսէս Շնորհալի եւ Ներսէս Լամբրոնացին տեւող եկեղեցական ծէսերին՝ այսքան միայն: Եթէ Պ. Ամիրխանեանը եւ իւր համեմիտները համակրումեն մինչեւ այդ Ներսէսները տեւող մեր եկեղեցուն, թող հաւատան որ Ներսէս Շնորհալուց յետոյ մեր եկեղեցին ոչինչ փոփոխութիւն չէ ստացել: Եթէ տարակուսեն այդ պիտիքը, թող դիմեն պատմութեանը, որին հմուտ է ձեւանում Պ. Ամիրխանեանը: